

**«Հայր լինելով աշխարհով մեկ սփռված ժողովուրդ՝ այսօր չունի համահայկական կրթօջախ»**

«Այսօր Հայաստանում և Մփյուռքում չկան արդի շնչին ու զարգացումներին համապատասխանող դպրոցներ: Մեր դպրոցներն իրենց մակարդակով չեն համապատասխանում համաշխարհային կրթական չափանիշներին: Հայր լինելով աշխարհով մեկ սփռված ժողովուրդ՝ այսօր չունի համահայկական կրթօջախ: Սա լուրջ մտահոգություն է, հարց է, թե հայ ժողովուրդն ի՞նչ առանցքի շուրջ պետք է համախմբվի, այս սերունդն ինչ ունի փոխանցելու հաջորդ սերունդներին: Եթե չունենք փոխանցելու բան, հաջորդ սերունդը բարոյազրկվելու է: 21-րդ դարի բուն զարգացումների մեջ մեր ազգի գոյատևման խնդիրը կրթության առանցքի շուրջ համախմբվելն է»,- ասուլիսում նման տեսակետ հայտնեց Մեսրոպ քահանա Արամյանը:

Նա մի նախաձեռնողական խմբի անդամ է, ովքեր ջանում են Կիպրոսում 2005 թվականին փակված Մելքոնյան կրթական հաստատությանում հիմնել հենց այդ համահայկական կրթօջախը: Այս օրերին խումբը Հայաստանում է՝ քննարկելու վարժարանի վերաբացման հարցը:

«Մեր ուսումնասիրությունները, դիտարկումները ցույց են տվել, որ Մելքոնյան հաստատությունն իր դարավոր ավանդույթներով ունի լավագույն հիմքեր, որպեսզի համահայկական այդ դպրոցը հենց այդ տարածքի վրա բացվի»,- ասաց նա:

Կիպրոսում գործող Մելքոնյան դպրոցը հիմնադրվել է 1926թ: Մելքոնյան վարժարանի տեղում հիմա ժամանակավորապես գործում է հունական դպրոց: Այն հայ ժողովրդի սեփականությունն է, այժմ տնօրինում է Հայ բարեգործական ընդհանուր միությանը, որն էլ տարածքը հանել է վաճառքի: Նախաձեռնող խմբի անդամ շվեյցարաբնակ Արդեն Շելեֆյանն ասաց, որ տարածքն այսօր վիճելի է, Միությունը իրեն հատուկ պատճառներով փակել է դպրոցն այն դեպքում, երբ 2004 թվականին դեռ 250 աշակերտ ուներ:

Նախաձեռնողական խումբը դիմել է Հայաստանում և Մփյուռքում բնակվող գործարարներին, ովքեր համաձայնվել են ֆինանսական օգնություն ցույց տալ իրենց՝ կրթահամալիրը վերաբացելու համար: Մեսրոպ քահանան ասաց, որ այն վերաբացելու համար այս պահին ունեն բավական լուրջ դրամական հիմք, սակայն իրավաբանական կարգավիճակի հարցը դեռ լուծված չէ: «Դեռևս Հայ բարեգործական ընդհանուր միությանն է, բայց բանակցությունների արդյունքում կլուծենք: Թող այն լինի միության սեփականությունը, բայց տա տնօրինման այդ մարդկանց, ովքեր

կրթական ծրագիր են ուզում իրականացնել»,- ասաց քահանան:

**Աղբյուր՝ Panorama.am**